

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ ԾՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

— Ի 1-ն օգոստոսի Սինօդն հրամայեաց՝ համեմատ եղբակցութեան կոնսիստորիային Երևանայ զգործս, որ զզեղծմանց գործակալին Ապարանայ Խորէն քահանայի Մկրտչեան, կարճել ի պատճառս ոչ ապացուցեալ գոլոյ այնոցունց, իսկ որ ինչ հայի ի խնդիր եղծմանց տարեթուոյ Գարեգնի Ցարութիւնեան՝ առնել զառանձինն զեկուցումն զկնի ընկալնլոյ գործոյն ի կոնսիստորիայէն։ Հ. 601.

— Ի նմին թուի Սինօդն հրամայեաց՝ քանզի ոչ հաստատի ամբաստանութիւն զնիկողայոսէ քահանայէ Տէր Ցարութիւնեան Բիւրական գեղջ, ուստի զգործս զայս կարճել։ Հ. 602.

— Ի 4-ն օգոստոսի Սինօդն հրամայեաց՝ քանզի ոչ

հաստատին մեղադրանք Մկրտիչ քահանայի Մկրտչեան և բողոքարկուք գիւղօրէից դործակալութեանն Զօրլուայ, դաւառին Աղէքսանդրապոլու, յետս կասեալ են ի բողոքոց իւրեանց, ուստի և կարճել զդործս։ Հ. 607.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ յետս դարձուցանել զդործ մեղադրանաց Տ. Ստեփանոս Մհէրեան և Տ. Աղէքսանդր Վարդանեան ծխատէր քահանայից Հայթաղ գեղջ, դաւառին Էջմիածնի, ի կոնսիստորիայն Երևանայ՝ պատուիրելով սահմանել զվճիռ վասն քահանայիցն ըստ ճիշտ մտաց 4 կ. 1142 յօդ. 1 մ. XI հատ. օրին., և կարճելով զայն ի Սինոդիս։ Հ. 608.

— Ի 6-ն օգոստոսի Սինոդն հրամայեաց՝ քանզի վանքն Հառիճոյ զարդիս չունի վանահայր, ուստի զհրամայողութիւն վանուցն յանձնել փոխանորդի վիճակին Աղէքսանդրապոլու Տ. Մատթէոս վարդապետի։ Հ. 609.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ պատուիրել կոնսիստորիային Երևանայ տնօրինել ընդունել զՍառա Խայկինան ի ծոց Հայաստանեայց եկեղեցւոյ, մկրտելով զնա ըստ սահմանեալ կարգի։ Հ. 611.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ ըստ միջնորդութեան կոնսիստորիային Վրաստանի ընդունել զԲարդուղիմէոսն Տըրըզեանց ի հոգևոր կոչումն, վասն ձեռնադրելոյ ի քահանայ ի հովութիւն ժողովրդեան Թախչա և Ապուլ գիւղից։ Հ. 613.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ հաստատել զեղբակացութիւն կոնսիստորիային Ղարաբաղի, որ վասն դադարեցուցանելոյ զՎրթանէս քահանայն Տէր Ղուկասեան Ղայբալի գեղջ, դաւառին Շուշւոյ ի քահանայագործութենէ և արկանելոյ ընդ եռամսեայ ապաշխարութեամբ ի վանս Ամարասայ։ Հ. 615.

— Ի 8-ն օգոստոսի Սինոդն հրամայեաց՝ ի նկատառեալ զանտեսական անձուկ վիճակ ծխական դպրոցին Բաղանա գեղջ, ըստ խնդրոյ հոգաբարձութեանն դպրո-

ցին, յատկացուցանել զարդիւնս ուխտատեղւոյն Ս. Սարգսի (մատուռ), որ մերձ ի գիւղն Բաղանա, այնմ դպրոցի։ Հ. 623.

— Ի Նմին թուի Սինոդն հրամայեաց՝ առաքել զԼևոն վարդապետն Փսերեան ի Բիշնև ի տրամադրութիւն թեմական առաջնորդի տեղւոյն, վասն որոյ նախ՝ պատուիրել Նմին զգոյս Վեհարանի յանձնել ցուցակաւ անդամոյ Սինոդիս Տ. Բարգէնի վարդապետի. երկրորդ՝ պատուիրել Նախագահի Տպարանական ժողովոյ ընդունել ի նմանէ զամենայն հաշիւս Տպարանի որ առ նա. երրորդ՝ ազատ կացուցանել զԼևոն վ. ի պաշտամանէ պատասխանատուանձին վասն Տպարանին, զոր պաշտօն յանձնել Տ. Երուանդայ վարդապետի, ծանուցանելով զայդմանէ Նահանգապետին Երևանայ։ Հ. 624.

— Ի Նմին թուի Սինոդն հրամայեաց՝ ըստ խնդրոյ հոգաբարձութեան ծխական դպրոցին Ուզունթալայ գեղջ յատկացուցանել զարդիւնս ուխտատեղւոյն Սրուեղայ դպրոցի գեղջն։ Հ. 625.

— Ի Նմին թուի Սինոդն հրամայեաց՝ քանզի որպէս հաւատի եղև Սինոդն, Բառնաբաս վարդապետն ոչ կարէ արդարև երիվարաւ շրջագայել ի հոկողութիւն և ի պաշտպանութիւն անտառին Հաղարծնի, կարգել զնա ի միաբան վանուցն Երնջակայ։ Հ. 626.

— Ի 11-ն օգոստոսի Սինոդն հրամայեաց՝ պատուիրել կոնսիստորիային Երևանայ պահանջել ի նախկին վանահօրէ Գեղարդայ վանուց ի Վահրամայ վարդապետէ զամենայն դոյս, որք մուծեալք գոլով ի մասեան գոյից վանուցն՝ տարեալ են ի ձեռն Վահրամայ վարդապետի, և յանձնել զայնս ներկայ վանահօր։ Երկրորդ՝ զպարտս զորս ցուցանէ Վահրամ վարդապետն ի վերայ արդիւնաշատ վանուցն Գեղարդայ ոչ ընդունել, այլ թողուլ զայնս ի հաշիւ Վահրամայ վարդապետի։ Հ. 631.

— Ի Նմին թուի Սինոդն հրամայեաց՝ առաքմամբ

խնդրագրի Մարիայի Ցինիցկայա պատուիրել կոնսիստորիային Հայոց Վրաստանի տնօրինել ընդունել զինդրատուն ի ծոց Հայաստանեայց եկեղեցւոյ, ծանուցանելով զոր ընդունելոյն Նահանգապետին Դանձակայ ի գիտութիւն։ Հ. 635.

— Ի 13-ն օգոստոսի Սինոդն հրամայեաց՝ զվախճանական լուծումն խնդրոյ վաճառելոյ զշինութիւն Խալիպեան դպրանոցի բարւոք համարելով թողուլ մինչ ցընտրութիւն և ցհաստատութիւն նորոգ Հայրապետի ապգիս՝ կարճել զայս գործ, զոր և ծանուցանել հոգաբարձութեան թեմական դպրանոցի Ն. Նախիջևանի և Բեսարաբիոյ ի ձեռն վիճակային կոնսիստորիային։ Հ. 643.

— Ի 15-ն օգոստ. Սինոդն հրամայեաց՝ ի քննին առեալ զգործն, զառաքեալն յեղբակացութիւն Սինոդիս ընդ գրութեան պ. Պրօկուրօրի շրջանական Դատարանին Տփխեաց ի 19-ն յուլիսի անցելոյ, թ. 10535, և ի նկատ առեալ զբացատրութիւն ողջոյն կազմի Ատենի կոնսիստորիայի Հայոց Վրաստանի ի 4-ն ապրիլի 1907 ամի, թ. 1054, Սինոդս համարի օրինաւոր զծախս զայնոսիկ միայն, որք արարեալ են՝ հիմնեալ ի վերայ փաստաթղթոց, տուելոց ի Կաթուղիկոսէ ամենայն Հայոց, որք յիշատակին ի յայտարարութեան անդ, ուրեմն և զկազմ ատենին ճանաչել ըստ այսմ մասին արդար և ոչ պատասխանատու առաջի օրինաց. իսկ զմնացեալ հաշուական գործողութիւն և զծախս համարել անկանոն և ապօրինի, հետևապէս և ճանաչել զնոյն կազմն ըստ մասինս ըստ այսմիկ յանցաւոր և դատելի ըստ 351, 356, 407, 411. 481, 474 և 484 յօդ. պատժոյ օրինաց. զբացատրութիւն դանձապահի նոյն կոնսիստորիայի Սարգսի քահանայի Շիսոյեան համարելով ըստ ամենայնի արդար՝ ճանաչել զնա անպարտ, նա զի ոչ մտանէ ի կազմ Ատենին, այլ սոսկ հրամանատար Նորին։ Զայս ամենայն ծանուցանել պ. Պրօկուրօրի շրջանական Դատարանին Տբփխեաց, դարձուցանելով զքննական գործն։ Հ. 646.

— Ի 25-ն օգոստոսի Սինոդն հրամայեաց՝ կարգել զվիճաբան Մ. Աթոռոյս զՏ. Բենիկ վարդապետն վերաքննիչ տուժարաց և հաշուոց թեմին Երևանայ, նաև ժողովող ամենայն ապառկաց և հասանելի Մ. Աթոռոյս դրամոց։ Տալ Բենիկ վարդապետի ռոճիկ առ ամիսն մի հարիւր ռուբլի ի մէկէն սեպտեմբերի տարւոյս և ճանապարհածախս ըստ չափու վերստին և՝ պատուիրել կոնսիստորիային Երևանայ կարգադրել զի ամենայն տեղիս տուեալ լիցի յիշեալ վարդապետի օթևան։ Հ. 664.

— Ի 27-ն օգոստոսի Սինոդն հրամայեաց՝ կարգել զՏ. Բենիկ վարդապետն վերաքննիչ տուժարաց և հաշուոց թեմից Տփխեաց, Ղարաբաղի, Շամախւոյ, Աստրախանի և Բեսարաբիոյ սկսեալ ի 1908 ամէ, նաև ժողովող ապառկաց և հասանելի Մայր Աթոռոյս դրամոց անցեալ ամաց։ Տալ Բենիկ վարդապետի ի 1-էն սեպտ. տարւոյս ռոճիկ ըստ օրադր վճռոյ որ ի 25-ն օգոստոսի տարւոյս. թ. 664. Հ. 655.

— Ի 27-ն օգոստ. Սինոդն հրամայեաց՝ թոյլ տալ կոնսիստորիային Ղարաբաղի ընդունել ի հոգևոր կոչումն զՄարտիրոսն Վարդապետեանց և առաջադրել Առաջնորդի թեմին Ղարաբաղի ձեռնադրել զնա ի քահանայ Դաշուշէն գեղջ, գաւառին Շուշւոյ։ Հ. 659.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ վերաքննելով զգործն, լրացուցեալն երկրորդ քննութեամբ և ունելով առաջի աչաց զեզրակացութիւն Փոխ-թեմակալին Երևանայ ըստ գործոյս՝ զՎահան քահ. Մամիկոնեան ճանաչել արդար և անպարտ ըստ ամենայն մեղադրական կէտից, յորս նա ծանուցեալ էր յանցաւոր ըստ նախկին օրադրի Սինոդիս ի 23-ն յունուարի տարւոյս։ Հ. 673.

— Ի 29-ն օգոստոսի Սինոդն հրամայեաց՝ թոյլ տալ կոնսիստորիային Ղարաբաղի ընդունել զԵրեմիայն Տէր Գրիգորեանց ի հոգևոր կոչումն և առաջադրել առաջնորդի թեմին ձեռնադրել զնա յերկրորդ քահանայ Շուշիքենդ գեղջ, գաւառին Շուշւոյ։ Հ. 676.